

5.3. 2010թ. ապրիլ ամսվա հիդրոոդերևութաբանական վիճակը Հայաստանում

Ըստ ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի պետական ծառայության տեղեկատվության, ապրիլին օդի միջին ամսական ջերմաստիճանը տարածաշրջանների մեծ մասում եղել է նորմային մոտ փոքր բացասական շեղումով, ՀՀ Տավուշի մարզում և Արարատյան դաշտավայրում՝ նորմայից ցածր 0.5-1 աստիճանով:

Միջին առավելագույն ջերմաստիճանն Արարատյան դաշտավայրում և Սյունիքի հովիտներում կազմել է +16 +19°C, ՀՀ Տավուշի մարզում և Արարատյան դաշտավայրի նախալեռներում՝ +13 +16°C, ՀՀ Լոռու մարզում և Սյունիքի նախալեռներում՝ +11 +13°C, լեռնային շրջաններում՝ +8 +11°C:

Ամենաբարձր ջերմաստիճանը տարածաշրջանների մեծ մասում դիտվել է ապրիլի 16-18-ին: Արարատյան դաշտավայրում գրանցվել է +24 +26°C, ՀՀ Տավուշի մարզում, Արարատյան դաշտավայրի նախալեռներում և Սյունիքի հովիտներում՝ +21 +25°C, ՀՀ Լոռու մարզում և Սյունիքի նախալեռներում՝ +17 +21°C, լեռնային շրջաններում՝ +13 +18°C:

Միջին նվազագույն ջերմաստիճանը լեռնային շրջաններում կազմել է -0.5 +2°C, ՀՀ Լոռու մարզում և Սյունիքի նախալեռներում՝ +3 +4°C, ՀՀ Տավուշի մարզում և Արարատյան դաշտավայրի նախալեռներում՝ +3 +7°C, Արարատյան դաշտավայրում և Սյունիքի հովիտներում՝ +6 +9°C:

Ամենացածր ջերմաստիճանը դիտվել է ապրիլի 1-3, 5-6 և 29-30-ին: Լեռնային շրջաններում գրանցվել է -1 -5°C, ՀՀ Լոռու մարզում, Արարատյան դաշտավայրի և Սյունիքի նախալեռներում՝ 0 -3°C, ՀՀ Տավուշի մարզում և Արարատյան դաշտավայրում՝ 0 +3°C, Սյունիքի հովիտներում՝ +3 +6°C:

Ապրիլ ամսվա ընթացքում տեղումների քանակը ողջ հանրապետությունում եղել է նորմայից բարձր: ՀՀ Կոտայքի մարզում և Արարատյան դաշտավայրում այն կազմել է նորմայի 230-250%-ը (ք.Արմավիրում (ՀՀ Արմավիրի մարզ)՝ 380%), ՀՀ Գեղարքունիքի մարզում՝ 170-250% (ք.Գավառում՝ 280%), ՀՀ Լոռու և Տավուշի մարզերում՝ 160-250% (Օձուն գյուղում (ՀՀ Լոռու մարզ)՝ 108%), ՀՀ Սյունիքի և Վայոց ձորի մարզերում՝ 120-160%:

Ապրիլի 5-7-ին, 17-18-ին և 20-21-ին դիտվել է առանց տեղումների եղանակ: Մնացած օրերին դիտվել են տեղումներ (12-13-ին, 23-24-ին և 27-29-ին՝ զգալի): Ապրիլի 8-9-ին, 18-ին, 22-ին և 26-27-ին տարածաշրջանների մեծ մասում դիտվել է ամպրոպ:

Ապրիլի 2-ին, 4-ին, 8-ին, 11-ին, 18-ին և 26-27-ին ք.Երևանում, 26-ին առանձին վայրերում դիտվել է քամու ուժգնացում, արագությունը՝ 8-18 մ/վրկ, պոռթկումները՝ 15-25 մ/վրկ: Ապրիլի 8-ին ք.Ապարանում (ՀՀ Արագածոտնի մարզ) դիտվել է ուժեղ անձրև (33մմ/12ժ), ք.Երևանում և ք.Հրազդանում (ՀՀ Կոտայքի մարզ)՝ կարկուտ 3-5 մմ տրամագծով: Ապրիլի 6-ին ք.Իջևանում (ՀՀ Տավուշի մարզ), 11-ին Ֆանտան գյուղում (ՀՀ Կոտայքի մարզ), 12-ին Ամասիա գյուղում (ՀՀ Շիրակի մարզ), 13-ին Աշոցք գյուղում (ՀՀ Շիրակի մարզ), 20-ին ք.Ստեփանավանում (ՀՀ Լոռու մարզ), 23-ին ք.Եղվարդում (ՀՀ Կոտայքի մարզ) և 29-ին ք.Գավառում դիտվել է մառախուղ 200-500 մ տեսանելիությամբ:

Ապրիլ ամսվա ընթացքում առանձին օրերին ձևավորվել է անկայուն ձևաձածկույթ: Ապրիլի 1-ին և 4-5-ին ք.Մարտունիում (ՀՀ Գեղարքունիքի մարզ), ք.Գավառում, ք.Ջերմուկում (ՀՀ Վայոց ձորի մարզ), ք.Քաջարանում (ՀՀ Սյունիքի մարզ), Մասրիկ գյուղում (ՀՀ Արարատի մարզ), Աշոցք գյուղում և Պուշկինի լեռնանցքում այն կազմել է 3-11 սմ, 11-ին ք.Արթիկում (ՀՀ Շիրակի մարզ), ք.Ջերմուկում և Մասրիկ գյուղում` 4-5 սմ, 24-ին Ամասիա գյուղում` 1 սմ, 29-ին ք.Վանաձորում (ՀՀ Լոռու մարզ), ք.Մեղրիում, ք.Սիսիանում, ք.Քաջարանում (ՀՀ Սյունիքի մարզ) և Սեմյոնովկա գյուղում (ՀՀ Գեղարքունիքի մարզ)` 2-31 սմ: Ապրիլի 30-ի դրությամբ ձյան ծածկը պահպանվել է 2000 մ-ից բարձր բարձրությունների վրա:

Ապրիլին հանրապետության գետերի մեծ մասում միջին ամսական ելքերը կազմել են նորմաների 100-160%-ը:

Սևանա լճի մակարդակն ապրիլ ամսվա ընթացքում բարձրացել է 21 սմ-ով և 2010թ. ապրիլի 30-ի դրությամբ կազմել 1899.63 մ, որը 2009թ. նույն օրվա համեմատ բարձր է 59 սմ-ով: